

Համլետ Կ. Դավթյան

ԴԱՎԻԹ ԱՆՎԱՆ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՓՈՐՁ*

Բանալի բառեր – Դավիթ, սիրելի, Աստվածաշունչ, Թումանյան, Էպոս, Տավիթ, արջառ, բառարմատ, խորհրդանիշ, ցուլ, պաշտամունք:

Դավիթ անունը ոչ այնքան առասպելական է (Աստվածաշունչ, Էպոս), որքան առեղծվածային: Իրականում մենք չգիտենք ո՛չ նրա իմաստը, ո՛չ էլ ձիշտ ստուգաբանությունը: Տարածված է այն տեսակետը՝ իբր մեր **Դավիթ**-ը հրեական **Դավիդ** անվան փոքր-ինչ հնչյունափոխված ձևն է, որը թարգմանաբար նշանակում է «**սիրելի, սիրեցյալ**»¹:

Հ. Աճառյանը ևս, համարելով, որ այդ անունը պարզապես տառադարձված է եբրայերենից, ինչպես նաև ներկայացնելով ասորերեն, լատիներեն, հունարեն, ֆրանսերեն, անգլերեն և ռուսերեն գրության ձևերը, մեկ վերապահում է անում նման պարզ փոխառության առնչությամբ՝ նշելով, որ «հայտնի չէ սակայն թե որտեղից է առաջացել հայերենում **թ** վերջածայնը, որ ո՛չ մի լեզվի մեջ էլ չկա»²: Մինչդեռ պարզվում է, որ խնդիրը միայն **թ** վերջածայնը չէ, այլ նաև **իթ** վերջավորությունը: Առաջին հայ քերականներից Անանուն մեկնիչը (V կամ VII դդ.) գրում է, որ **Դավիթ** անունը բաղկացած է երկու մասից՝ **Դավ+իթ**³:

* Հոդվածն ընդունվել է տպագրության 23.07.2023:

1 **ՏԷՐ ԽԱՅԱՏՈՐԵԱՆ Ա., ԳԱՆՎՐՈՆԻ Հ., ՏՕՆԻԿԵԱՆ Փ.**, Հայոց լեզուի նոր բառարան, Պէյրուս, 1968, էջ 914:

2 **ԱՃԱՌԵԱՆ Հ.**, Հայոց անձնանունների բառարան, հատ. 1, Եր., 1944, էջ 22-23:

3 ՏԵՄ ԱՐՈՆՑ Ն., Երկեր, հատ. Գ, Եր., 2008, էջ 137:

Գրիգոր Մագիստրոսը (XI դ.) լրացուցիչ հուշում է, որ **իթ** վերջավորությունն արական պատկանելության ցուցիչ է⁴: Այդուհանդերձ, նշյալ դիտարկումները կարելի է լոկ բառի կազմության վերաբերյալ արտահայտված տեսակետներ համարել, ինչպես այն, որ էպոսում **Դավիթ** անունը գործածված է նաև իբրև ածական (Հովհ. Թումանյան)⁵ կամ հասարակ գոյական (Ավ. Իսահակյան)⁶:

Չափազանց հետաքրքրական են **Դավիթ** անվան ծագումն ու իմաստը բացահայտելու ուղղությամբ Հովհաննես Թումանյանի պրպտումները: Նրա կարծիքով՝ «կա մի աղբյուր, որ Դավիթ անունը տվել է և՛ հայ էպոսին, և՛ հայ իշխաններին, և՛ Վրաստան, և՛ Ռուսաստան, և՛ ամբողջ Եվրոպա»⁷: Եվ այդ աղբյուրը հնդկական վեդաներն են: Թումանյանը գրում է, որ Դավիթը «մեր էպոսի մեջ լուսավոր ու ամենակարող ուժն է ներկայացնում հնդկական Սիվայի նման: Եվ հենց էստեղից էլ առնում է իր ծագումը: Վեդայի մեջ՝ դեավ՝ աստվածների ընդհանուր անունն է, որ կնշանակի պայծառ, գեղեցիկ, լուսավոր և ամենատեղ, ամենակարևոր»⁸:

Հ. Թումանյանն իր ուսումնասիրությունը գրել է 1920-1921 թթ.: Բազմաթիվ ուշագրավ դատողություններից բացի՝ նրա հիմնական նպատակներից մեկն էր ցույց տալ, որ հայերի շրջանում **Դավիթ** անվան տարածվածությունը չի կարելի բացատրել լոկ Սուրբ Գրքի ազդեցությամբ: 1939 թվականին «Սասունցի Դավիթ» էպոսի հազարամյակի տոնակատարության առիթով (ակնհայտորեն կուսակցական պատվերով) նույնաբովանդակ մի հոդված է գրում Ավետիք Իսահակյանը⁹: Ապշեցնողն այն է, որ նա, բառացիորեն կրկնելով Թու-

4 Տե՛ս նույն տեղում, էջ 241:

5 Տե՛ս **Թումանյան Հ.**, Հայկական էպոսի բառարանից, «Երկերի լիակատար ժողովածու», հատ. VIII, Եր., 1999, էջ 274, 279: Որպես օրինակ է բերվում այն տեսարանը, երբ Դավիթը գնում է Խանդութ խանումի պալատ, որտեղ արդեն նստած էին 39 ուրիշ հսկաներ: Էպոսում ասվում է. «Աթոռ մը թալեցին Տաթի տակ, նստաւ մէջ էն 39 Տաիթներուն, որ ուրմէն առաջ աշըղներ իկեր բերեր էին» («Ձոջանց տուն կամ Սասնայ ծոեր», խմբ.՝ **Ստ. Կանայեանցի**, Վաղարշապատ, 1910, էջ 27):

6 Ավ. Իսահակյանն իր հոդվածում բերում է հենց նույն օրինակը: «Մեր վեպի մեջ, գրում է նա, - Դավիթ կոչումը ունեցել է մի ուրիշ էվոլյուցիա. նա դարձել է հասարակ գոյական անուն, նա ստացել է քաջի, կտրիճի, փահլևանի, հսկայի իմաստ» (**Իսահակյան Ա.**, Փորձ մեր էպոսի դիցաբանության մասին, «Երկերի ժողովածու», հատ. V, Եր., 1977, էջ 162):

7 **Թումանյան Հ.**, նշվ. աշխ., էջ 277:

8 Նույն տեղում, էջ 278:

9 Տե՛ս **Իսահակյան Ա.**, նշվ. աշխ.:

մանյանի բոլոր հիմնական դրույթները, ոչ մի տեղ չի նշում իր ավագ ընկերոջ անունը¹⁰:

Ինչևէ, վերադառնալով **Դավիթ** անվան ծագման հարցին, թերևս պետք է կրկին անդրադառնանք նրա կազմությանը՝ **Դավ+իթ**: Հետաքրքրական է, որ և՛ բառարմատը, և՛ վերջավորությունը առանձնակի ուշադրության կարիք ունեն: Ինչպես տեսանք, Թումանյանը, մի կողմ թողնելով **Դավիթ** անվան՝ եբրայերենից ծագելու վարկածը, մատնանշում է վեդայական **դեավ** գոյականը: Ընդհանուր առմամբ այս վարկածը տրամաբանական ու համոզիչ է թվում, որովհետև **դեավ**-ը գրեթե նույնն է, ինչ **դավ**-ը. ընդամենը մեկ հնչյուն է սղված: Սակայն Թումանյանը զարմանալիորեն շեղում է կատարում հայհնդկական ուղղակի առնչությունից և միջնորդի դերը վերապահում արևելյան տարբեր ժողովուրդների: «Մինչև հիսգերորդ դարը,- գրում է նա,- Դավիթ անունը գրեթե չի երևում մեր երկիրներում: Այնուհետև է միայն [երևում] հաճախանում, իսկ թուրք-մոնղոլական արշավանքների շրջանում ուղղակի մեր երկիրները լիքն են Դավիթներով.... Թուրք-թաթար-մոնղոլական առասպելների մեջ դևը դարձել է տեր, միշտ պահելով իր իմաստը: Տերը՝ Տուբութ, Տուբութը՝ Տուվութ, Տուվութը՝ Դավութ կամ Դավիթ: Եվ Դուվութ կամ Դավիթ է կոչվում մոնղոլական հին էպոսի մեջ առասպելական (ոչ պատմական) Չինգիզ խանը: Դավիթ է կոչվում և նրա ախպերը, որ դարձյալ դյուցազն է և Չինգիզ խանի խորթ եղբայրը.... Տուբութ, Տուվութ կամ Դավիթ անունը, որ էնքան շատ է ընդունված թուրք-թաթար-մոնղոլական հին գրույցներում՝ նշանակում է տեր աստվածային, ապա դյուցազուն և սովորաբար գործ է ածվում որպես ածական»¹¹:

Ընդունենք փաստը, որ **Դավիթ** անունը տարածված է ինչպես Արևմուտքում, այնպես էլ Արևելքում: Սակայն, կարծում ենք, դա պարտադիր պայման չէ ենթադրելու, որ անպայման հայերս էլ ենք ինչ-որ մեկից վերցրել այն: Փորձենք տեղում փնտրել մեզ համար խորհրդանիշ դարձած անվան արմատները: Սկսենք նրանից, որ մեր

10 Այնուամենայնիվ, նա բոլորովին իմիջհայլոց տողատակում հիշատակում է Թումանյանին, սակայն ոչ թե Դավթի, այլ Միեթի առնչությամբ՝ ասելով, թե Թումանյանը ձիշտ է, որ կիրառել է **Առյուծ Միեթ** ձևը, բայց և չնշելով, որ առաջինը հենց Թումանյանն է կարծիք հայտնել, որ **Առյուծաձև** նշանակում է ոչ թե «առյուծ ձևող», այլ «առյուծի նման, առյուծակերպ»:

11 **Թումանյան Հ.**, նշվ. աշխ., էջ 277-279:

ժողովրդի մեջ տարածված է եղել անվան երկու տարբերակ՝ **Դավիթ** և **Տավիթ**¹²: Ո՞րն է սրանցից վաղագույնը: Կա՞ նման բան, թե՞ արտասանության խնդիր է: Նախ ընդունված ձևով բաղդատենք անունը՝ **դավ/տավ** և **իթ**, որտեղ **դավ/տավ**-ը դիտարկվում է որպես բառարմատ, իսկ **իթ**-ը՝ վերջավորություն: Տվյալ պարագայում **դավ**-ը մեզ ոչինչ չի ասում, որովհետև, ըստ ամենայնի, պարզապես կատարվել է հնչյունափոխություն՝ **տ**-ն դարձել է **դ** (չբացառենք աստվածաշնչյան ընթերցումների ազդեցությունը): Իսկ ահա **տավ**-ը մի ամբողջ թեմա է բացում մեր առջև: Բառարանային բացատրությամբ **տավ**-ը բառարմատ է, որին ավելանում է **-ար** գոյականակերտ վերջածանցը, և կազմվում խոշոր եղջերավոր ընտանի կենդանիների (կով, եզ, գոմեշ, երինջ, մոզի, հորթ, արջառ) ընդհանուր անվանումը¹³: Բառի գրաբարյան գրելաձևն է **տուար**, որ նշանակել է «**արջառ**»: Ծագել է հնդեվրոպական նախալեզվի **արջառ** բառից¹⁴: Այն սկզբնապես նշանակել է «**զոհի անասուն**» և շատ լեզուներում հենց այդ իմաստով էլ գործածվում է մինչ օրս: Մասնագետների կարծիքով՝ բառը կրել է եռափուլ փոփոխություն՝ **տուար-տուվար-տավար**:

Այժմ այն մասին, թե ինչպես է հասարակ գոյականը դարձել հատուկ անուն: Նորից նշենք, որ **տուար** նախապես նշանակել է «**արջառ**»: Իսկ **արջառը** նույն **ցուլն** է, միայն ամորձատած: Բայց ամորձատած է նաև **եզը**: Տեսնենք, ուրեմն, տարբերությունը: Այսպես՝ ցլին (իհարկե՛ գլիկին) ամորձատելով արջառ դարձնելը, անկասկած, սրբազան արարողության մաս է կազմել: Այդպես կենդանուն նախապատրաստել են արարողությանը: Իսկ ահա երբ ցլին ամորձատելով եզ էին դարձնում, դրանով ընդամենը աշխատանքի միջոց, գործիք էին ստեղծում: Այսինքն՝ եզը բանելու համար էր, իսկ արջառը՝ զոհաբերության համար նախատեսված սուրբ կենդանի, որին չէր կարելի բանեցնել¹⁵:

12 Ուշագրավ է, որ արևմտահայերի շրջանում **Դավիթյան** և **Դավոյան** ազգանվանաձևերին գուգահեռ պահպանվել են նաև **Տավիթյան** և **Տավոյան** ձևերը (տե՛ս **Ավետիսյան Տ.**, Հայոց ազգանունների բառարան, Եր., 2010, էջ 332):

13 Տե՛ս **Աղայան Է.**, Արդի հայերենի բացատրական բառարան, հատ. Բ, Եր., 1976, էջ 14-15:

14 Ըստ Գ. Զահուկյանի՝ **արջառ**-ի ծագումն անհայտ է (տե՛ս **Զահուկյան Գ.**, Հայերեն ստուգաբանական բառարան, Եր., 2010, էջ 95):

15 Այդ սովորությունը մինչ օրս պահպանվում է հայ անասնապահների շրջանում, այսինքն՝ արջառին չեն լծում, թողնում են իբրև մսացու:

Այժմ՝ **արջառ-ցուլ** կամ **ցուլ-արջառ** նույնականության մասին: Նախ՝ երկուսն էլ, ավելի ճիշտ՝ նույն կենդանին՝ երկու տարբեր վիճակներով, կրոնական գործառույթ են ունեցել: Ցուլը (ցլի կերպարը) պաշտվում էր, արջառը՝ զոհաբերվում: Ժամանակի ընթացքում **տուար**-ի նախնական՝ «**արջառ**» իմաստը թուլացել, կարելի է ասել՝ գրեթե ամբողջությամբ մոռացվել է, փոխարենը տարածվել է խոշոր եղջերավոր ընտանի կենդանիների ոչ արու (կով, եզ, գոմեշ, երինջ, մոզի, հորթ, արջառ) տեսակների վրա որպես ընդհանրական անվանում: Ոչ անհիմն կերպով ենթադրում ենք, որ դա տեղի է ունեցել քրիստոնեության տարածման շրջանում: Համաձայն այդ կրոնի գաղափարախոսության՝ մարդկանց գիտակցության մեջ կատաղի ցուլը պետք է մոռացության մատնվեր՝ իր տեղը թողնելով հնագանդ կովին ու եզին:

Բանն այն է, սակայն, որ պետք է մոռացության մատնվեր ոչ միայն կամ ոչ այնքան կատաղի ցուլը, որքան ցլի պաշտամունքը: Դա սկզբունքային նշանակություն ուներ Հայաստանյայց եկեղեցու հայրերի համար, որովհետև այն հայ ժողովրդի հնագույն հավատալիքների մաս էր կազմում: «Ցլի պաշտամունքը, - գրում է ազգագրագետ Ս. Հարությունյանը, - հայերի մեջ առաջացել է դեռևս տոտեմական հավատալիքների ժամանակներից, երբ մարդկային տոհմի կամ ցեղի ազգակցումն ու ծագումը կապում էին կենդանիների կամ բնության տարրերի հետ... Հայերը անձնավորել են նաև լեռները, մասնավորապես՝ Տավրոսը ցլի կերպարով... Ցուլն իբրև ամպրոպային աստվածության կենդանակերպ արտահայտություն»¹⁶:

Ըստ Հ. Աճառյանի՝ **ցուլ**-ը բնիկ հայերեն, դեռևս հնդեվրոպական նախալեզվից մնացած բառ է¹⁷: Հովհ. Ազիզբեկյանը, առանձին ուսումնասիրություն նվիրելով Հայաստանի տարածքում սփռված ցլակերպ վիշապաքարային կոթողներին, նշում է, որ այդ «վիշապաքարերի ներքին տարիքը կարող է լինել 13-րդ հազարամյակը, իսկ վե-

16 **Հարությունյան Ս.**, Հին հայոց հավատալիքները, կրոնը, պաշտամունքն ու դիցարանը, Եր., 2001, էջ 7, 26: Հավելեմք, որ ցլի պաշտամունքը տարածված է եղել Հին աշխարհում՝ Ասորեստանում, Բաբելոնում, Խեթական թագավորությունում, Պարսկաստանում, Եգիպտոսում, Հնդկաստանում, Կրետեում, Հունաստանում, Հռոմում, նաև գերմանական ու սկանդինավյան ժողովուրդների շրջանում: Օրինակ՝ պարսիկները համարում էին, որ ցուլն արարվել է ոչ միայն մարդու հետ միաժամանակ և նրան համահավասար, այլև նրան իբրև օգնական (տե՛ս **Дюмезиль Ж.**, *Верховные боги индоевропейцев*, М., 1986, էջ 95-96):

17 Տե՛ս **Աճառյան Հ.**, Հայերեն ստուգաբանական առձեռն բառարան, Ժնև, 2004, էջ 278:

րին տարիքը (սկիզբը)՝ ենթադրել, մոտ 30.000–25.000 տարի»¹⁸: Եվ դրանք կերտել է մարդկային մի ցեղ, որի մնացորդները շարունակում են ապրել նույն լեռնաշխարհում **հայ** ինքնանվանումով:

Սրբազան ցլի կերպարը (բնականաբար՝ նաև պաշտամունքը) չափազանց երկար է պահպանվել հայ ժողովրդի կյանքում և իր ուրույն տեղն է ունեցել նրա հավատալիքներում: Ցլի արձանիկներ ու ոճավորված կուռքեր են հայտնաբերվել Հառիճի վաղբրոնզիդարյան բնակավայրում¹⁹ և Շենգավիթի հնավայրում (թվագրվում են մ.թ.ա. 2600–2400 թվականներով)²⁰: Հայ ժողովրդի ուրարտական շրջանի պանթեոնում գլխավոր աստվածներից Թեյշեբան առնչակցվում էր ցլի պաշտամունքի հետ՝ խորհրդանշելով ուժ, հզորություն, պտղաբերություն, հողի բերրիություն, առատություն: Նրան սովորաբար պատկերում էին ցլի վրա կանգնած: Ցույն ամպրոպի աստծու խորհրդանիշն է մնում նաև հետուրարտական շրջանում: Այդ իսկ պատճառով Վահագնի մեհենատեղին, որը Մեծ Հայքի թագավորների գոհաբերության վայրն էր, հիմնվել էր Աշտիշատում՝ Տավրոս լեռան դեմուդեմ (Փավստոս Բուզանդը գործածում է լեռան **Ցուլ** անվանումը²¹): Հետո եկավ քրիստոնեությունը և բառացիորեն հողով ծածկեց ցլակերպ բոլոր հնարավոր նյութական կերտվածքները, մոռացության մատնեց ստեղծարար ցլի կերպարը: Դրանով պայմանավորված՝ փոխվեց նաև **տուար/տավար**-ի բուն իմաստը՝ **ցուլ**-ը, և դրան փոխարինեց **եզ**-ը: Այսօր **տավար** ասելիս նախ և առաջ հասկացվում է կով, արջառ և եզ: Հ. Աճառյանը համոզում է, որ արևելյան ու հնդեվրոպական բոլոր լեզուներում **տավար** նշանակում է «ինչք, ապրանք» կամ, լավագույն դեպքում, «գոհի անասուն»: Այդուհանդերձ, բուն հայաձևը, որ գալիս է նախալեզվից, **ցուլ**-ն է: Այն պահպանվել է լատիներենում, հունարենում, գերմաներենում (taurus – ցուլ)²²:

Հիմք ընդունելով **տուար/տավար**-ի «**ցուլ**» իմաստը՝ միանգամայն պարզ է դառնում, որ հայկական **Դավիթ/Տավիթ** անձնանվան

18 Ազիզբեկյան Հ., Վիշապաքարեր. ծագումը և թվագրությունը, carahunge.org (մուտք՝ 02.07.2022):

19 Տե՛ս Եզանյան Լ., Կավե կուռք Մեծ Սեպասարից, ՀՀ ԳԱԱ ՇՀՀԿ «Գիտական աշխատություններ», հատ. 19, Գյումրի, 2016:

20 Տե՛ս Ազիզյան Ա., Շենգավիթից հայտնաբերված քարե մի արձանիկի շուրջ, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հատ. XXXIII(1), Եր., 2020, էջ 53:

21 Տե՛ս Փավստոս Բուզանդ, Պատմություն Հայոց, Եր., 1968, էջ 95:

22 Տե՛ս Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հատ. Դ, Եր., 1979, էջ 424:

դավ/տավ արմատը նշանակում է «**ցուլ**»: Այժմ փորձենք հասկանալ, թե ինչ է նշանակում **իթ** վերջավորությունը: Այս մասին լեզվաբանական կարծիքներ ու տեսակետներ պարզապես չկան: Հայտնի է միայն, որ հայերենը **իթ** վերջածանց չունի, ուստի այն պետք է դիտարկել սոսկ որպես վերջավորություն²³: Տվյալ պարագայում մեզ մնում է հիշել, որ, Գրիգոր Մագիստրոսի համոզմամբ, **իթ** վերջավորությունն արական պատկանելության ցուցիչ է: Բայց **ցուլ**-ն ինքնին արական պատկանելություն է ցույց տալիս (երբեք որևէ էգ արարածի ցուլ չես ասի), հետևաբար բառին նույնիմաստ բաղադրատարր ավելացնելն անիմաստ ու ավելորդ է, քանի որ կստացվի արու ցուլ: Ուրեմն այդ պատկանելությունը մեկ ուրիշի ցուցիչն է, որն անմիջապես սերում է ցլից: Դա արու գավակն է՝ որդին²⁴:

Այսպիսով՝ **Տավիթ/Դավիթ** անունը հայերեն նշանակում է «**ցլի որդի**»: Բնականաբար՝ «երկնային ցլի»: Մոռանանք, ուրեմն, անվան երբայական ստուգաբանությունը, ըստ որի՝ այն նշանակում է «**սիրելի**», և մեկընդմիջտ հիշենք, որ **Դավիթ** հայերեն նշանակում է «**երկնային ցլի որդի**»: Հնարավոր է, որ այն հնագույն ժամանակներում առաջին հերթին գործածվել է որպես տիտղոս²⁵:

Համետ Կ. Դավթյան – հեղինակել է աշխատություններ և հոդվածներ՝ նվիրված հայոց պատմության միջնադարյան շրջանին վերաբերող կնճռոտ հարցերին ու մերօրյա խնդիրներին:

Էլ. հասցե՝ hamletdavtyan55@gmail.com

23 Հ. Աճառյանի «Հայերեն ստուգաբանական բառարանում» **իթ** վերջավորությամբ բոլոր բառերի դիմաց (խրճիթ, կնճիթ, քիթ, գավիթ, առիթ և այլն) նշված է «**չստուգաբանուած**», իսկ Գ. Ջահուկյանի «Հայերեն ստուգաբանական բառարանում» հիմնականում նշված է «**ծագումն անհայտ է**»:

24 **Որդի**-ն բնիկ հնդեվրոպական բառ է և ստուգապես նշանակում է «**արու գավակ**»:

25 Փաստորեն, **Տավիթ/Դավիթ** անունը հայկական առաջին արական անուններից է և ուղղակիորեն կապված է եղել մեր ազգային կրոնի հետ: Թերևս հենց դա էլ պատճառ է հանդիսացել, որ կրոնափոխ եղած երկրում անունը նախ մոռացության տրվի, իսկ հետո վեր հանվի իբրև հրեական անվան փոփոխված տարբերակ: Հետևաբար, կարծում ենք, այսուհետ պետք է տարբերակել նաև անվան գրության ձևերը, հայերենի դեպքում՝ **Դավիթ**, մյուս դեպքերում՝ **Դավիդ**:

A NEW ATTEMPT AT THE ETYMOLOGY OF THE NAME DAVIT

Hamlet K. Davtyan

Key words – Davit, beloved, Biblia, Tumanyan, epos, Tavit, cattle, word-root, symbol, bull, worship.

There is a common belief that the Armenian name Davit (Դավիթ) is a slightly phonetic modification of the Jewish name David, which means **beloved, lover**. However, the popularity of the name both in the West and in the East is not a necessary condition for assuming that the Armenian form is also borrowed. By looking for the roots of the name, it is noticeable that the two versions of the name were common among Armenians: Davit and Tavit. Which of these is the oldest? Is it a problem of pronunciation, what does the Armenian version of the name mean - these are the questions discussed in the article.

First of all, the name is divided into **dav/tav** and **-it**, where **dav/tav** is considered as the root and **it** is the ending. Then, based on the meaning of «**tuar/tavar**» as «**bull**», it becomes quite clear that the root **dav/tav** of the Armenian personal name Davit/Tavit means «**bull**». Now we will try to understand what the ending «**-it**» means. There are no linguistic opinions and views on this. It is only known that the Armenian language does not have an «**-it**» suffix, so it should be considered only as an ending. In this case, we have to remember that, according to **Grigor Magistros**, the ending «**-it**» is an indicator of male belonging. But bull itself is masculine (you would never call any female creature «**bull**»), so adding a synonym to the word is pointless and redundant, as it would be a male bull. So that ending is indicative of another, directly descended from the bull. It is the **male child, the son**.

Thus, the name **Tavit/Davit** means «**son of a bull**» in Armenian, naturally, «**of a heaven bull**». Thus, the Hebrew etymology of the name should be forgotten, according to which it means «**beloved**», and remember once and for all that Davit means «**son of a heaven bull**» in Armenian. It may have been used primarily as a title in ancient times. In fact, the name **Tavit/Davit** is one of the first Armenian male names and was directly related to our national religion. Perhaps this is the reason why the name was first forgotten in the country which had changed its religion, and then returned as a modified version of the Jewish name. Therefore, we

think that from now on it is necessary to distinguish between the ways of writing the name, in the case of Armenian, **Davit**, and in other cases, **David**.

Резюме

НОВАЯ ПОПЫТКА ЭТИМОЛОГИЧЕСКОГО АНАЛИЗА ИМЕНИ «ДАВИТ»

Гамлет К. Давтян

Ключевые слова – Давит, любимый, Библия, Туманян, эпос, Тавит, бычок, корень слова, символ, бык, культ.

Принимается точка зрения, будто бы армянский «Давит» (Դաւիթ) – это несколько фонетически измененное еврейское имя «Давид», что переводится как «любимый, возлюбленный». Тот факт, что имя широко распространено как на Западе, так и на Востоке, не является необходимым условием для предположения, что армянская форма также является заимствованием. Если искать корни этого имени, то заметно, что у армян были распространены два варианта: «Давит» и «Тавит». Какой из них самый ранний? Существует ли такое понятие, как проблема произношения, а также что означает армянский вариант – вот вопросы, которые обсуждаются в данной статье.

Прежде всего, в имени различаются два компонента – **дав/тав** и **-ит**, где **дав/тав** считается корнем, а **-ит** окончанием. Тогда, исходя из значения «**туар/тавар**» как «**бык**», становится совершенно ясно, что корень **дав/тав** армянского имени собственного «**Давит/Тавит**» означает «**бык**». Теперь попробуем понять, что означает окончание **-ит**. Мнения и взгляды на этот счет в лингвистике расходятся. Известно только, что в армянском языке нет суффикса **-ит**, поэтому этот компонент следует рассматривать только как окончание. При этом надо помнить, что, по мнению **Григора Магистроса**, окончание **-ит** является показателем принадлежности слова, понятия к мужскому полу. Но бык сам по себе является понятием мужского пола (быком ни одно существо женского пола не назовешь), поэтому добавлять к этому корню синонимичную составляющую бессмысленно и излишне, т.к. это будет «бык мужского пола». Следовательно, этот компонент

указывает на принадлежность к понятию «бык», а именно на **теляца, сына**.

Таким образом, имя **Давит/Тавит** по-армянски означает «**сын быка**»,. Естественно, «**небесного быка**». Итак, забудем еврейскую этимологию имени, согласно которой оно означает «возлюбленный», и запомним раз и навсегда, что «**Давит**» в переводе с армянского означает «**сын небесного быка**». Возможно, в древние времена оно использовалось в основном как титул. На самом деле имя **Тавит/Давит** – одно из первых армянских мужских имен и имеет непосредственное отношение к нашей национальной религии. Возможно, именно по этой причине имя сначала было забыто в стране, изменившей религию, а затем возвращено как видоизмененная версия еврейского имени. Исходя из результатов нашего исследования, мы пришли к выводу, что необходимо различать способы написания имени, а именно: армянского имени «**Давит**», а в других случаях – «**Давид**».

REFERENCES

1. Acharean H., Hayots' andznanunneri bařaran, hat. 1, Yer., 1944 (In Armenian).
2. Acharyan H., Hayeren armatakan bařaran, hat. D, Yer., 1979 (In Armenian).
3. Acharyan H., Hayeren stugabanakan ařdzern bařaran, Zhnev, 2004 (In Armenian).
4. Adonts' N., Yerker, hat. G, Yer., 2008 (In Armenian).
5. Aghayan Ēd., Ardi hayereni bats'atrankan bařaran, hat. B, Yer., 1976 (In Armenian).
6. Avetisyan T., Hayots' azganunneri bařaran, Yer., 2010 (In Armenian).
7. Azizbekyan H., Vishapak'arer. tsagumě yev tvagrut'yuně, carahunge.org (02.07.2023) (In Armenian).
8. Azizyan A., Shengavitits' haytnabervats k'are mi ardzaniki shurj, "Merdzavor yev Mijin Arevelk'i yerkrner yev zhoghovurdner", hat. XXXIII (1), Yer., 2020 (In Armenian).
9. Djumezil Zh., Verxovnyje bogi indojevropejcev, M., 1986 (In Russian).
10. Harut'yunyan S., Hin hayots' havatalik'nerě, kroně, pashtamunk'n u dits'araně, Yer., 2001 (In Armenian).
11. Isahakyan A., P'ordz mer ěposi dits'abanut'yan masin, "Yerkeri zhoghovatsu", hat. V, Yer., 1977 (In Armenian).
12. Jahukyan G., Hayeren stugabanakan bařaran, Yer., 2010 (In Armenian).
13. P'avosts Buzand, Patmut'yun hayots', Yer., 1968 (In Armenian).
14. Tēr Khach'aturean A., Gangruni H., Tōnikean P', Hayots' lezui nor bařaran, Pēyruť, 1968 (In Armenian).
15. T'umanyan H., Haykakan ěposi bařaranits', "Yerkeri liakatar zhoghovatsu", hat. VIII, Yer., 1999 (In Armenian).
16. Yeganyan L., Kave kurk' Mets Sepasarits', HH GAA SHHHK "Gitakan ashkhatut'yunner", hat. 19, Gyumri, 2016 (In Armenian).